



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 01-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 03-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի փետրվարի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը հաստատելու մասին» թիվ 03-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա) որոշման 1-ին մասի դ) կետից հետո ավելացնել դա) ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի վարչական գործերով ամսական՝ համաձայն թիվ 11/1 և 12/1 հավելվածների».

բ) որոշմամբ հաստատված թիվ 7 և թիվ 9 հավելվածների «Գերագույն» բառերը փոխարինել «վերաքննիչ» բառերով:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա.ԱՎԱԳՅԱՆ